Գիտություն

ԴԵԿՏԵՄԲԵՐ
№ 12
(325)
2018 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ



Պարույր ՍԵՎԱԿ

ԴԻՄՈՒՄ ԵՄ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՊԵՍ

Դո՛ւ, որ գալիս ես մեր մանուկների արդար պահանջով,
Իբրև պատասխան նրանց սրսըփուն ակնկալիքի,
Դո՛ւ, որ գալիս ես մրսկան արտերի դողդոջուն կանչով,
Իբրև պատասխան նրանց կարիքի.
Դո՛ւ, որ ոտներըդ խճողել ես դեռ անցյալի ցանցով,
Մինչդեռ ձեռքերդ մեկնել ես արդեն կանչող գալիքին,
Արի՜, Նո՛ր տարի,
Գալուստդ բարի՜:
Արի՜, Նո՛ր տարի,
Բայց... այնպե՛ս արի,
Որ ատոմական այս ահեղ դարի
Գոռ ժամացույցը ինքն իրեն լարի
Մայրացած հարսի սրտատըրոփի համաչափությամբ,
Եվ նրա անտես սլաքները զույգ
Իրենց վիրավոր թևաթափությամբ
Ոչ թե մեզ կրկին
Քարանձավների անաչ խոռոչը մատնացույց անեն,
Այլ Տիեզերքի անկոխ դաշտերին
Մեր զույգ աչքերի հայացքը տանեն...
Արի՜, Նո՜ր տարի,
Բայց... այնպե՛ս արի,
Որ ավելանա աշխարհի բարին,
Եվ այդ աշխարհի բախտի վրայով
Խնորեն ձգված մետաղալարին
Լարախաղացի ծպտըված տեսքով Չա՛րը չպարի՝
Ողջ մարդկությանը դնելով ծանոթ ծաղրածուի տեղ...
Չյունն է վայր իջնում
Ու ծածկում մայթեր, ծառեր ու թիթեղ:
Իսկ ուրիշ մի տեղ
Անձրևն է կրկին
Երկինք ու երկիր մեկմեկու հինում,
Կարծես թե հսկա տավիղ է շինում,
Որի հոսանուտ լարերի վրա
Իրիկնամուտի տաղվահար քամին
Մրսած մատներով
Պիտի նվագի հինավուրց տաղեր՝
Ի վերա սիրո,
Վասն խնդության,
Վասն մարդկային ոգու խենթության:
Անձրևի տեսքով,
Չյան կերպարանքով
Այդ դու ես գալիս:
Արի՜, Նո՜ր տարի,
Գալուստդ բարի՜:
Բայց... այնպե՛ս արի,
Որ անձրևը հորդ սրբելով տանի
Ոչ միայն կեղտը հոգնած մայթերի,
Այլ նաև փոշին ու մուրը հոգու,
Այլև խավար խոհ ու խարդախ խոկում,
Եվ ձյունը իջնի որոգայթների՛,
Ծանըր ամոթից շիկնած այտերի՛,
Ուրացումներից դեղնած-ժանգոտած սրտերի՛ վրա
Եվ իր այդ ճերմակ բարությամբ շռայլ
Մարդուն մարդու դեմ պարզերե՜ս անի...
Արի՜, Նո՛ր տարի,
Բայց... այսպե՛ս արի,
Եվ ոչ թե այնպե՛ս, որ ձյունը ճերմակ
Դառնա վարակի սավան ու վերմակ,
Եվ որ անձրևի ջուրն աստվածածին
Մարդու արյունը ջրի վերածի,
Ու ճառագա՛յթը, ճառագա՜յթն անբիծ
Մկըրտվի իբրև մի ահեղ ու պիղծ
Նոր հիվանդության դիվային անուն,
Որից մինչև իսկ մահն է մահանում...
Արի՜, Նո՛ր տարի,
Գալուստդ բարի՜,
Եվ արթնացըրո՛ւ քո թնդուն քայլքով
Ուշ մնացածին,
Քնով տարվածին.
Տո՛ւր ապաքինում հոգով ցավածին,
Հիասաթափվածին՝ նոր մի հիացում,
Սիրասաթափվածին՝ մի նոր միացում.
Ձեռքից հավատը փախուստ տվածին,
Իբրև Նոր տարվա բաղձալի նվեր,
Կո՛ւր նոր հավատի կապակուռ թևեր,
Մանկանը՝ մեծի մտքի լիացում,
Մեծին՝ մանուկի անարատություն,
Տափարակներին՝ Արարատություն,
Իսկ Երկրագնդին՝ մի առատություն,
Որ նրա վրա Քաղցը այսուհետ
Չունենա ո՛չ մի կայսրություն ու գահ,
Ու Սարսափն իրեն թագակիր չզգա.
Որ Ազատությունն իր բառե գունեղ շապիկը ճեղքած
Տրվի ճախրանքի,
Ու Մարդն ազատվի իր հին գերության նոր
հաճախանքից,
Ու Մարդն այսուհետ ո՛չ մի տեղ երբեք չգունավորվի.
Եվ որ այլևս ո՛չ մի ժողովուրդ,
Ո՛չ մի ազգ ու ցեղ
Պատմության քափից ու սև մրուրից չթունավորվի
Դառնա լիազո՛ր, դառնա լիիրա՛վ,
Ու մենք, վերջապե՜ս, հասկանա՛նք իրար,
Ամենքըս, բա՜վ է, հասկանա՛նք իրար:
Նաև հասկանա՛նք,
Որ մեր իսկ արյան գնդիկը մանըր
Այս Երկիր կոչված գնդից ավելի մեծ է ու ծանըր...

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Սպիտակի երկրաշարժ, 30 տարի անց. փորձ և հեռանկարներ»

Սույն թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Սպիտակի երկրաշարժ, 30 տարի անց. փորձ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովը՝ նվիրված 1988 թ.-ի աղետալի երկրաշարժի տարելիցին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: «Սպիտակի երկրաշարժը մասնագիտական առումով իր հզորությամբ սովորական երկրաշարժ էր, եթե նկատի ունենանք պատմության ընթացքում աշխարհում տեղի ունեցող բազմաթիվ երկրաշարժեր: Բայց այս երկրաշարժն ունի կարևոր բնութագիր՝ կապված մեր ժողովրդի ունեցած կորուստների հետ: Առաջինը 25.000 մարդկային զոհերն են, որ մենք ունեցանք այս երկրաշարժի հետևանքով և մյուսը, հսկայական

նյութական կորուստները, որոնք հասան մինչև 15-20 միլիարդ ԱՄՆ դոլարի: Այսինքն, մարդկային և ռեսուրսների կորստի տեսակետից աննախադեպ էր այս երկրաշարժը: Նման կորուստների հիմնական պատճառն այն էր, որ երկրաշարժի տարածքում շինարարական կառույցների նախագծման և կառուցման ընթացքում թույլ են տրված եղել բազմաթիվ սխալներ: Այդ պրոբլեմի գծով Հայաստանի գիտնականների կողմից մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել, և այդ աշխատանքների արդյունքում պետականորեն այժմ հաստատված են շինարարական, սեյսմիկ միանգամայն այլ ցուցանիշներ: Սպիտակի երկրաշարժի մասին բավականին մեծ մշակումներ են արված, և դրանց մի մասը կներկայացվի այս գիտաժողովի ընթացքում»,- իր խոսքում մասնավորապես ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը՝ մաղթելով գիտաժողովի մասնակիցներին հետաքրքիր քննարկումներ: Նա հույս հայտնեց, որ գիտաժողովի ընթացքում մասնագետները կներկայացնեն նորանոր հետազոտություններ և կփոխանակեն իրենց ունեցած փորձը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին նաև ՄԱԶԾ գրասենյակի մշտական ներկայացուցիչ Շոմբի Շարփը և ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի ներկայացուցիչ Ուիլիամ Վորդերը: Այնուհետև մասնակիցները դիտեցին Սպիտակի ավերիչ ➢2

ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ - 2018

Պատմության մեջ երրորդ անգամ **ֆիզիկայի բնագավառում** Նոբելյան մրցանակ է ստացել իգական սեռի ներկայացուցիչ: Կանադուհի Դոնա Սթրիկլանդը Նոբելյան մրցանակը կիսում է ամերիկացի Արթուր Էշկինի և ֆրանսիացի Ժերար Մուրոյի հետ՝ լազերային ֆիզիկայում նորարարության, այն է՝ օպտիկական նրբունելիի ստեղծման և կենսաբանությունում դրա կիրառման համար:

Քիմիայի գծով Նոբելյան մրցանակ շնորհվել է ամերիկացի գիտնական և ճարտարագետ Ֆրենսի Առնոլդին՝ ֆերմենտների ուղղորդված էվոլյուցիայի համար, ամերիկացի քիմիկոս, Միսուրիի համալսարանի պրոֆեսոր Ջորջ Սմիթին և բրիտանացի կենսաքիմիկոս, Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, սըր Գրիգորի Վինտերին՝ պեպտիդների և հակամարմինների ուսումնասիրման համար:



Ֆիզիոլոգիայի և բժշկության ասպարեզում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ են դարձել ԱՄՆ-ի Հյուսթոնի համալսարանի պրոֆեսոր Ջեմս Էլիսոնը և Ճապոնիայի Կիոտո քաղաքի համալսարանի աշխատակից Տասուկա Հոնձյոն՝ քաղցկեղի իմունաբուժման նոր եղանակի հայտնագործման համար:

Տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակ է շնորհվել երկու ամերիկացիների՝ Յելի համալսարանից Ուիլյամ Նորդհաուսին՝ «Կլիմայի փոփոխության ինտեգրումը երկարատև մակրոտնտեսական վերլուծության մեջ» և Նյու Յորքի Stern School of Business-ից Փոլ Ռոմերին՝ «Տեխնոլոգիական նորարարությունների ինտեգրումը երկարատև մակրոտնտեսական վերլուծության մեջ» նորարարությունների համար:

Խաղաղության Նոբելյան մրցանակի են արժանացել իրաքցի իրավապաշտպան Նադիա Մուրադին և կոնգոցի վիրաբույժ Դենիա Մուքվեգեն «սեռական բռնությունը որպես պատերազմի զենք օգտագործման և զինված հակամարտությունների դադարեցմանն ուղղված նրանց ջանքերի համար»:

Նոբելյան հանձնաժողովը հայտարարել է, որ 2018-ին չի հանձնի գրականության Նոբելյան մրցանակ՝ թեկնածուների շվեդական ակադեմիայում սկանդալի պատճառով: 2017 թ. վերջին շվեդական ակադեմիայում ներքին հետաքննություն է սկսվել տվյալների արտահոսքի գործով, որում մեղադրվում է կազմակերպության անդամներից մեկի ամուսինը: Խոսքը ֆրանսիացի լուսանկարիչ Ժան-Կլոդ Առնոյի մասին է, որը մեղադրվում է կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների և բռնության իրականացման համար:

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը նշեց հիմնադրման 75-ամյա հոբելյանը

Սույն թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված գրականության ինստիտուտի հիմնադրման 75-ամյակին: Շնորհավորական ելույթներով հանդես եկան գիտության, կրթության, մշակույթի և գրական աշխարհի ներկայացուցիչներ, ընթերցվեցին տարբեր հաստատությունների ողջույնի և շնորհավորանքի խոսքեր: Հյուրերին ներկայացվեց ինստիտուտի անցած ճանապարհը, գիտական ձեռքբերումները, ինչպես նաև գիտական առաջիկա ծրագրերը:

ՀՀ ԳԱԱ ղեկավարության, տարբեր նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի կողմից գրականության ինստիտուտի վաստակաշատ գիտաշխատողներին հանձնվեցին պարգևներ:

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը հիմնադրվել է 1943 թվականին: Ինստիտուտի գործունեության հիմնական ոլորտներն են՝ հայ հին և միջնադարյան գրականություն, հայ նոր գրականություն, հայ նորագույն գրականություն, բնագրագիտություն, գրականության տեսություն, արտասահմանյան գրականություն, գրականագիտություն, սփյուռքահայ գրականություն, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն:

Գրականության ինստիտուտի ծավալած գործունեության արդյունքում հրատարակվել են՝ «Հայ նոր գրականության պատմություն» (5 հատոր), «Հայ քննադատության պատմություն» (2 հատոր), «Հայ քննադատության մատենագիտություն» (1 հատոր), «Հայ վեպի պատմություն», «Հայ նոր գրականության ժամանակագրություն» 1801-1875 թթ. (3 հատոր), «Հովհաննես Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» (6 հատոր): Իրականացվել են՝ Խ. Աբովյանի, Գ. Սունդուկյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Հ. Պարոնյանի, Պ. Դուրյանի, Սիամանթոյի, Մուրացանի, Ղ. Աղայանի, Շիրվանզադեի, Պ. Պռոշյանի, Հ. Հովհաննիսյանի, Դ. Վարուժանի, Հ. Թումանյանի, Մ. Աբեղյանի, Ա. Բակունցի, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի երկերի լիակատար գիտական (ակադեմիական) հրատարակությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Շուքուրյանն ընտրվեց «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագիր

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագիր միաձայն ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայաստանի և Երևանի գլխավոր քիթ-կոկորդ-ականջաբան Արթուր Շուքուրյանը:

Բժշկագիտության դոկտոր, Երևանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) պրոֆեսոր Արթուր Շուքուրյանը 2016 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Նա 214-ից ավելի աշխատանքների և 1 մենագրության հեղինակ է:

Արթուր Շուքուրյանը Հայաստանի Հանրապետության Քիթ-կոկորդ-ականջաբանների ասոցիացիայի նախագահն է, «Вестник оториноларингологии» (Ռուսաստանի Դաշնություն) ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, «Քիթ-կոկորդ-ականջաբանության միջազգային հանդես» (Ղազախստան) ամսագրի խմբագրական խորհրդի անդամ: Արթուր Շուքուրյանը «Էրեբունի» բժշկական կենտրոնի «Քիթ-կոկորդ-ականջաբանության» բաժանմունքի վարիչն է, ԵՊԲՀ-ի քիթ-կոկորդ-ականջաբանության ամբիոնի վարիչը:

Արթուր Շուքուրյանը 2001 թ.-ին արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի բժշկագիտության բնագավառում, 2004 թ.-ին արժանացել է «Վաստակավոր բժշկի» կոչման:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

«Սպիտակի երկրաշարժ, 30 տարի անց. փորձ և հեռանկարներ»

➢1 երկրաշարժին նվիրված վավերագրական ֆիլմ, որին հաջորդեցին զեկուցումները:

Սպիտակի 1988 թ. երկրաշարժի հետևանքով առաջացած հասարակական ցնցումը նոր մակարդակի է հասցրել սեյսմատեկտոնական գիտելիքները, երկրաշարժերի երկրաբանությունը և սեյսմիկ վտանգների գնահատումը Հայաստանում: Այն կարևոր խթան է հանդիսացել երկրում

ակտիվ տեկտոնիկայի և պալեոսեյսմաբանական ուսումնասիրությունների համար և նպաստել է միջազգային համագործակցությանը:

«Սպիտակի երկրաշարժ, 30 տարի անց. փորձ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովին մասնակցելու համար Հայաստան էին ժամանել գիտնականներ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իտալիայից, Վրաստանից, Գերմանիայից, Հունաստանից, Իրանից, Տաջիկստանից, Թուրքիայից, Թուրքմենստանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Հոլանդիայից, Ճապոնիայից, Քաթարից, Բելգիայից և Կանադայից:

Գիտաժողովն աշխատանքները շարունակեց մինչև դեկտեմբերի 7-ը: Այդ օրը գիտաժողովի մասնակիցները այցելեցին Գյումրի և էպիկենտրոնային գոտի:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱԱ-ն և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ԿՈՉՄԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ

(«Պատմաբանասիրական հանդես»-ի 60-ամյակի առթիվ)

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտական պարբերականը՝ «Պատմաբանասիրական հանդես»-ը, բոլորեց իր գոյության վեցերորդ տասնամյակը:

Հանդեսը հիմնադրվել է 1958 թվականին՝ ԽՍՀՄ-ում 50-ական թվականների կեսերին սկսված քաղաքական «ձնհալի» և խորհրդային տնտեսության, կրթության ու գիտության բուռն զարգացման և հայ ազգային ինքնագիտակցության զարթոնքի ժամանակաշրջանում:

Հանդեսը սկսեց տպագրվել, երբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան արդեն ուներ հասարակագիտական և հայագիտական պարբերական՝ 1940 թ. հիմնադրված «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր: Հասարակական գիտություններ» ամսագիրը [1940-1943 թթ. այն կոչվել է հասարակական ու բնական գիտությունների «Տեղեկագիր» (ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի), իսկ 1966-ից՝ «Լրաբեր հասարակական գիտությունների»]: Այդ պատճառով առավել կարևոր էր հանդեսի ծրագրային նպատակների ու խնդիրների հստակ սահմանումը: Նոր պարբերականի առաջին համարում տպագրված «Խմբագրության կողմից» ներածական հոդվածում նշված է, որ հանդեսն իր առջև նպատակ է դրել օժանդակել պատմաբանասիրական գիտությունների բնագավառում առկա չլուսաբանված հիմնախնդիրների, գիտական մանրազնին ուսումնասիրության և արդիականության դիրքերից վերագնահատման կարոտ բազմաթիվ հարցերի քննարկմանն ու լուծմանը: Ապա, մասնավորեցնելով, թվարկված են այն բնագավառները, որոնց ուսումնասիրությունն առաջնային պետք է լիներ հանդեսի համար. «Պատմա-բանասիրական հանդես»-ի էջերում կլուսաբանվեն հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, փիլիսոփայության, արվեստի և կուլտուրայի այլ բնագավառների հարցերը և ընդհանրապես հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կապերը մյուս ժողովուրդների հետ: Հանդեսը լայնորեն կլուսաբանի Սովետական Հայաստանի գիտական և կուլտուրական նվաճումները: Գիտական պրոբլեմների քննարկմանը նպաստելու նպատակով հանդեսը կունենա գիտական քննարկումների բաժին, որը կօժանդակի ստեղծագործական բանավեճերի ծավալմանը: Նա կունենա նաև բնագրերի հրապարակման, գրախոսությունների, գիտական լուրերի ու տեղեկությունների բաժիններ» (1958, № 1, էջ 3-4): Հանդեսի կարևորագույն խնդիրներից է համարվել արտասահմանի հայ ընթերցողներին Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների աշխատանքներին ծանոթացնելը, ինչպես նաև հայաստանյան ընթերցողներին արտասահմանյան հայագետների աշխատանքների վերաբերյալ տեղեկություն հաղորդելը: Պարբերականի գլխավոր նպատակն է՝ հանդեսի շուրջ համախմբել հայաստանյան ու արտասահմանյան հայագետներին և միացյալ ուժերով նպաստել հայագիտության հետագա զարգացմանը: Կարևորելով գիտությունների ակադեմիայի հայագիտական հանդեսի ստեղծումն ու գործունեությունը՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին 1960 թ. հուլիսի 28-ին խմբագրությանը հղած նամակում «Պատմաբանասիրական հանդես»-ը գնահատում է որպես «լրջագույն ակադեմիական ամսագիր», որի ասպարեզ իջնելը պայմանավորվում էր հասարակական նախադրյալներով՝ համընդհանուր առաջընթացով և իր անցյալն արժևորելու՝ հայ ժողովրդի ծգտմամբ:

Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ ստեղծված նոր պարբերականի խմբագրական կոլեգիայի կազմում ընդգրկվեցին անվանի պատմաբաններ ու բանասերներ: Հանդեսի գլխավոր խմբագիր նշանակվեց նրա հիմնադիր, ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, ով շուրջ 40 տարի անընդմեջ, անմնացորդ նվիրումով ղեկավարեց հանդեսի աշխատանքները: Նրա եռանդուն ջանքերով հանդեսը դարձավ միջազգային ճանաչում ունեցող հայագիտական ամենահեղինակավոր պարբերականը: 1999 թ. Մ. Ներսիսյանի մահից հետո հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնը վստահվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, անվանի պատմաբան Վարդգես Միքայելյանին: Վերջինիս մահից հետո՝ 2005 թ., հանդեսի մեկ համար լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր Պարույր Մուրադյանի, մեկն էլ՝ հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանի խմբագրությամբ: 2006 թ. հանդեսի գլխավոր խմբագիր ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայտնի բանագետ-բանասեր Սարգիս Հարությունյանը: 2018 թ. հունիսի 13-ին ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր ընտրվեց Անուշավան Զաքարյանը, իսկ խմբագրական խորհրդի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

Գոյության ողջ ընթացքում հանդեսն անշեղորեն լույս է տեսել իր ծրագրային նպատակներին ու խնդիրներին համահունչ բովանդակությամբ: Պարբերականի առաջին համարից նաև ձևավորվել ու տարիներ ի վեր նույնությամբ պահպանվել է նրա բովանդակային կառուցվածքը: Հանդեսի բաժիններն ու ենթաբաժինները («Հոդվածներ», «Հաղորդումներ», «Բանավեճեր», «Պատմամշակութային ակնարկներ», «Հրապարակումներ», «Քննարկումներ», «Գրախոսություններ», «Սփյուռքահայ կյանք», «Մեր երախտավորները», «Գիտական լրատու», «Գիտական կյանք», «Մեր հոբելյարները», «Նամակ խմբագրությանը») հետագայում միայն ենթարկվել են որոշ լրացումների ու ճշգրտումների: Հոդվածների, հաղորդումների, հրապարակումների ու քննարկումների (նախկինում՝ բանավեճերի) բաժիններում ընդգրկվում են հայ և օտարազգի մասնագետների աշխատություններ, որոնցում վերլուծված են հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների պատմության, գրականության, լեզվի, բանահյուսության, ազգագրության, հնագիտության, վիմագրության, փիլիսոփայության, իրավունքի, արվեստների, ճարտարապետության այլևայլ խնդիրները, ինչպես նաև Հայաստանում, Սփյուռքում ու արտասահմանում տեղի ունեցած գիտական, մշակութային կարևոր իրադարձությունները, ներկայացվում է ականավոր հայագետների կյանքն ու գործունեությունը: Հանդեսը ծանրակշիռ ներդրում ունի կովկասագիտական, արևելագիտական, բյուզանդագիտական ուսումնասիրությունների ասպարեզում: Ընդհանուր մշակութաբանական և պատմաբանասիրական հետաքրքրություն ներկայացնող խնդիրները ևս մշտապես հանդեսի ուշադրության կենտրոնում են՝ դրանով իսկ առավել ընդլայնելով նրա գիտական տեսադաշտը, իբրև գիտական լայն ընդգրկումների պարբերական: Նշենք, որ «Պատմաբանասիրական հանդես»-ում տպագրված նյութերն առանձնանում են աղբյուրագիտական և պատմագիտական հարուստ հենքով:

Պարբերականի «Գրախոսություններ», «Մեր հոբելյարները», «Գիտական կյանք» կամ «Գիտական լրատու» (նախկինում՝ «Գիտական ինֆորմացիա») բաժիններում պարբերաբար հրատարակվում են գիտության և մշակույթի ականավոր դեմքերի անտիպ նամակներ, արխիվային տարբեր բնույթի վավերագրեր, ներկայացվում են հայագիտական, արևելագիտական ու ընդհանուր մշակութաբանական արժեք ներկայացնող կարևոր հրատարակություններ, համակողմանիորեն լուսաբանվում է հայկական գաղթավայրերի պատմամշակութային կյանքը, տեղեկություն է տրվում կարևոր հոբելյանների, հայաստանյան և միջազգային գիտաժողովների վերաբերյալ:

Հանդեսի խմբագրությունը հետևողական է նաև աղբյուրագիտական նորույթների, հնագիտական պեղումների արդյունքներն ամփոփող նյութերի, նորահայտ մատենագրական փաստաթղթերի հրապարակման գործում:

Պարբերականի խմբագրությունը, դրսևորելով բարձր պրոֆեսիոնալիզմ և նվիրվածություն իր աշխատանքին, կարողացել է հանդեսի շուրջը համախմբել Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Եվրոպայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, Ամերիկայի հայ ու այլազգի բազմաթիվ գիտնականների: Դրա շնորհիվ պարբերականը ոչ միայն հաջողությամբ կատարել է իր առջև դրված խնդիրներն, այլև նպաստել է ստեղծագործական բանավեճերի ծավալմանը, գիտական կապերի ու համագործակցության կայացմանը հայոց պատմության և մշակույթի ուսումնասիրության ասպարեզում:

1997–2009 թթ. «Պատմաբանասիրական հանդես»-ի հրատարակմանը մեծապես նպաստել է «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ»-ի և նրա հայկական բաժանմունքի ղեկավար, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Զավեն Եկավյանի ֆինանսական օժանդակությունը:

«Պատմաբանասիրական հանդես»-ը հիմնադրման օրվանից ընթերցողին ներկայացել է որպես 1500-2400 տպաքանակով երկլեզու պարբերական, որում նյութերը հրատարակվել են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան լեզուներով ամփոփումներով: Ներկայումս դրանց կցված են նաև անգլերեն լեզվով ամփոփումներ, ինչի շնորհիվ պարբերականում հրատարակված նյութերի ընդհանուր բովանդակությունը մատչելի է դարձել շատ ավելի մեծ թվով օտարալեզու ընթերցողների: Գիտնականների ավագ և միջին, ինչպես նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչների համար միշտ էլ պատիվ է եղել հանդեսում տպագրվելը: Ցավոք, վերջին երկու և կես տասնամյակում հանրապետության գիտական հանդեսները հայտնվել են բազմաբնույթ ու դժվար հաղթահարելի խոչընդոտների առջև՝ սկսած ֆինանսական սղությունից մինչև հրատարակության պարբերականության պահպանում, տպաքանակի նվազում և այլն: Անկախ այդ հանգամանքներից՝ «Պատմաբանասիրական հանդես»-ը բարձր է պահում իր գիտական հեղինակությունը, ինչն ամենադժվարն է մեր իրականության մեջ:

Այսօր, թեև նվազել է հանդեսի տպաքանակը (250 օրինակ), սակայն, ինչպես և անցյալում, այն հասնում է իր ընթերցողներին աշխարհի տարբեր ծագերում: Ուշագրավ մի փաստ ևս. մինչև 1990 թ. տարեկան հրատարակվել է հանդեսի 4 համար, 1991-1997 թթ.՝ 1 կամ 2, մինչև 2000 թ. եղել են միացյալ համարներ, իսկ 2000 թ. «Պատմաբանասիրական հանդես»-ը եռամսյայից վերածվեց քառամսյա հանդեսի, և առ այսօր տարեկան հրատարակվում է 3 համար:

Անցած 60 տարիների ընթացքում լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդես»-ի 208 մեծադիր համար՝ յուրաքանչյուրը 15-20 մամուլ ծավալով, միջին հաշվով յուրաքանչյուր համարում զետեղվել է 25 անուն նյութ, այսինքն՝ իր գոյության ընթացքում հանդեսն իր էջերում ընթերցողին ներկայացրել է շուրջ 5700 տպագիր միավոր:

1983 թ. հայերեն ու ռուսերեն, իսկ 2009 թ. հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուներով լույս տեսան «Պատմաբանասիրական հանդես»-ի 1958-1982 և 1983-2007 թթ. մատենագիտական ցանկերը: Ցանկերում թվարկված հրապարակումների քանակը՝ համապատասխանաբար 2828 և 1909 միավոր, ներկայացնում է կես դարի ընթացքում հայագիտական ու դրան աղերսվող գիտական այլ բնագավառների զարգացման ուղղությունները և գիտահետազոտական գործընթացները: Ի դեպ, հանդեսի 1983-2007 թթ. մատենագիտական ցանկը տպագրվել է «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ»-ի միջոցներով:

«Պատմաբանասիրական հանդես»-ը առանձնահատուկ տեղ է գրավում հայ պարբերական մամուլի բազմադարյա պատմության մեջ: Այն նաև առանձնանում է Հայաստանի Հանրապետության պարբերական գիտական հրատարակությունների շարքում որպես հայագիտական հեղինակավոր պարբերական: Իսկ դա վերջին տասնամյակներին կատարվում է չնչին աշխատավարձով, մեծ ջանքերի, խմբագրական-սրբագրական չարքաշ ու լարված աշխատանքի շնորհիվ: Հավելենք, որ խմբագրությունը մինչև 2003 թ. ունեցել է, մասնավորապես, գլխավոր խմբագրի, գլխավոր խմբագրի տեղակալի, պատասխանատու քարտուղարի հաստիքային միավորներ, որոնցից այսօր մնացել է միայն պատասխանատու քարտուղարինը: Միջազգային հեղինակավոր հայագիտական պարբերականի հանդեպ նման մոտեցումը, մեղմ ասած, անհարիր է Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի առջև ծառացած բազում մարտահրավերների պայմաններում:

Շնորհավորելով «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրության աշխատակիցներին, խմբագրական խորհրդի անդամներին, հեղինակային ողջ կազմին ու գիտական հանրությանը պարբերականի լույս ընծայման 60-ամյա հոբելյանի կապակցությամբ և մաղթելով նորանոր հաջողություններ՝ լիահույս ենք, որ հանդեսն այսուհետ ևս նշանակալի ավանդ կունենա արդի հայագիտության զարգացման գործում՝ հավատարիմ մնալով իր կոչմանը: Իսկ հայագիտության զարգացումն այլևս դժվար է պատկերացնել առանց «Պատմաբանասիրական հանդես»-ի:

Լիլիթ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՊՈՒՅՏ – ԿԱՊՈՒՅՏ ԱՂՈԹՔ

Կամ... մոռացվող անուն

Ես չգիտեմ, ձա՞յն է արդյոք,
Թե մի կապույտ, կապույտ աղոթք...

Վահագն Կարենց

Դեռ կոնսերվատորիայում ուսանելիս Լուսինեն չափազանց կապված էր կոմիտասյան երգի հետ: 1965-ից սկսած նա արդեն երգում էր կոմիտասյան բոլոր ամենահայտնի երգերը: Կոնսերվատորիայի դասախոս, դաշնակահարուհի Մարիաննա Հարությունյանի և Խորեն Պալյանի աջակցությամբ Լուսինեն կազմեց համերգային մեծ ծրագիր՝ բացառապես կոմիտասյան երգերից: Այդ ծրագիրը այն ժամանակ գրեթե անհավանական էր թվում: Երկբաժին համերգն ընդգրկում էր քսաներկու երգ՝ հոգևոր մեղեդիներ, գեղջկական և հայրենասիրական երգեր: 1965 թվականի այդ համերգին՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին, Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճը լեփլեցուն էր: Կոմիտասի երգերի լուսինեական կատարումներն աչքի էին ընկնում ամենից առաջ այդ երգերի հոգեբանական խորքերը թափանցելու երգչուհու արտակարգ կարողությամբ:

Հավատարիմ հայ մելոսի ոգուն

1964 թվականին Երևան բերվեց առաջին երգեհոնը, և սկսվեցին երգեհոնային համերգները: Սա այն շրջանն էր, երբ միջնադարյան հայ երաժշտությունը նոր միայն վերակենդանանում էր: Վահագն Ստամբոլցյանի և Լուսինե Զաքարյանի համատեղ համերգները երաժշտական իրադարձություն էին Հայաստանում: Լուսինեն խոստովանել է, որ իր երազանքն է եղել երգեհոնի նվագակցությամբ երգել, և երջանիկ էր: Երևանի երաժշտասերները երբեք նման խանդավառությամբ չէին շրջապատել ֆիլհարմոնիայի դահլիճը, ինչպես դա տեղի էր ունենում Զաքարյան-Ստամբոլցյան համերգների ժամանակ: Լուսինեն պարբերաբար համերգներ էր տալիս հայազգի աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ ժամկոչյանի հետ:

Մի քանի տարվա համերգային գործունեությունը Լուսինեին բերեց ժողովրդական համբավ, և առանց նրա այլևս անհնար էր պատկերացնել հայկական համերգադահլիճը: Նույնիսկ կանգնելու տեղ ու անկյուն չկար: Հոգևոր երաժշտությունը, մեր միջնադարյան տաղերը ժողովուրդն ընդունեց գարնանային թարմ ու կենարար օդի պես:

Այդ ժամանակ «Գրական թերթում» բանաստեղծ Լևոն Միրիջանյանը այսպես է բնութագրում Լուսինեի առաքելությունը. «Լուսինեն՝ պարզ ու հասարակ, բայց բացառիկ զգայուն արվեստագետ աղջիկը, կատարում է մի գործ, որի արժեքը հիմա դժվար է որոշել: Նա իր արվեստով պատմության ամենակուլ փոշուց մաքրում, ազատում է հայ երգը... Լուսինեն օգնում է ճիշտ հասկանալու մեր ազգային երգը, օգնում հավատարիմ մնալու հայ մելոսի ոգուն»:

Լուսինեի արվեստով ոչ պակաս հափշտակված էր մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը, ով հատուկ Լուսինեի համար գրել էր հայտնի «Վոկալիզը»:

Խաղաղություն սփռող ձայն

«Լուսինեի ամենահզոր հատկությունը իր ձայնի խաղաղ ելևէջներն են: Պատարագում որպես լայտմոտիվ պարբերաբար հնչում է «խաղաղություն ամենեցուն» արտահայտությունը: Լուսինեի ձայնը այդ խաղաղությունը սփռողն է»:

Դանիել Երաժիշտ

1977 թվականի ապրիլի 26-ին Հայֆիլհարմոնիայի դահլիճը լեփլեցուն էր. Լուսինեի մենահամերգն էր: Համերգին ներկա էր կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Նա լսում էր ուշադիր, անհանգիստ, սրբում էր արցունքները: Ռոյալը ծածկված էր ծաղիկներով, Լուսինեն ծաղիկների մի հսկա փունջ կազմեց, մոտեցավ բեմի առաջամասին և սկսեց ծափահարել՝ դեմքով դեպի դահլիճը: Բոլորը ոտքի էին, դահլիճը փոթորկվում էր ծափահարություններից: Մեծ վարպետը ցնցվում էր հուզմունքից, կանգնել էր շվար և երջանիկ: Չէին դադարում ծափահարությունները: Բեմը կիսամութ դարձավ, երկնքից ասես օրհնություն իջավ. Լուսինեն էր երգում «Սուրբ-սուրբը» ու կարծես երգում էր միայն Մաեստրոյի համար: Համերգից հետո կոմպոզիտորը ներս մտավ Լուսինեի զարդասենյակ, համբուրեց նրան կրկին և նստելով գրասեղանի առջև՝ գրեց. «Սիրելի Լուսինե: Ես ուրախ եմ, որ կարող եմ ասել մի քանի խոսք Ձեր արտասովոր տաղանդի մասին: Ձեր այս համերգից ես ստացա իսկական, վիթխարի գեղարվեստական բավականություն: Դուք ունեք շատ գեղեցիկ, բոլոր ռեգիստրներում սահուն, լսելիքը, սիրտը և գիտակցությունը շոյող ձայն: Ձեր պարզությունը և Ձեր կատարման անաղարտ մաքրությունը հմայում է լսողին: Բոլորը կարկամում են: Դա ինչ-որ կախարդանք է: Թող Ձեր արվեստը պատռի բոլոր սահմանները և նվաճի տիեզերքը»:

Արամ Խաչատրյան , 26.4.1977»

Հայ երգը՝ հայրենիքից դուրս

Լուսինեն գերեց ոչ միայն հայ, այլև օտարազգի ունկնդրի սիրտը: Հայաստանի պետական երգչախումբը պետք է հյուրախաղերի մեկներ Մոսկվա՝ Մոցարտի «Ռեքվիեմով»: Մենակատար երգչուհին հիվանդացել էր: Երգչախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Հ. Չեքիջյանը Լուսինեին առաջարկեց կատարել սոպրանոյի պարտիան: 1964 թ. նոյեմբերի 27-ին Մոսկվան հիացավ Լուսինեի կատարմամբ: Նրան շնորհավորեց Պավել Լիսիցյանը՝ խոստովանելով, որ իրեն այսպիսի բան դեռ չէր վիճակվել լսել:

Երեք տարի անց կրկին Մոսկվայում՝ Չայկովսկու անվան կոնսերվատորիայի՝ երգեհոն ունեցող լսարաններից մեկում հավաքվել էին նշանավոր մտավորականներ, երգիչներ, երաժիշտներ՝ ունկնդրելու ամերիկացի նկարիչ և գրող Ռոքուել Քենտի պատվին կազմակերպված Լուսինե Զաքարյանի համերգը: Համերգին բացատրություններ տալիս էր Խորեն Պալյանը: Լուսինեն կատարեց 10 շարական և մեղեդի: Մի քանի օր հետո Ռոքուել Քենտը «Վեչերնյայա Մոսկվայում» գրեց. «Այն ձայնը, որ լսեցի, ամենաանգերազանցելի ձայներից էր, որ երբևէ լսել եմ իմ կյանքում, և իմ պատկերացումը հրաշքների երկիր Հայաստանի մասին ամբողջական չէր լինի, եթե չլիներ այս նոր հրաշքի ՝ Լուսինե Զաքարյանի երգը»:

Եվ Երգեց Լուսինեն

«Երբ Լուսինեն երգում է «Սուրբ-սուրբը», ամբողջ հրեշտակները բազմությամբ իջնում են Մայր աթոռ ու փառաբանում Աստծուն իր այդ երգեցողության ու նրան ի վերուստ տրված շնորհի համար»:

Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոս

Հայ երգի լուսինեական մեկնաբանումների գեղեցկությունն ու զուտ ազգային նկարագիրը խանդավառում էր մարդկանց, միավորում հայրենիքի հանդեպ հպարտության ու սիրո զգացողությամբ: Ազգային և օտար մամուլի հաղորդումների համաձայն՝ Լուսինեն չափազանց հմայիչ էր թե՛ միջնադարյան հոգևոր երգի, թե՛ Կոմիտասի, թե՛ ժամանակակից անգլո-ամերիկյան կոմպոզիտորների ստեղծագործությունները կատարելիս:

Առավել նշանակալից էր «Ավե Մարիա» երգերին նվիրված մենահամերգը: «Ավե Մարիա» երգերի շարքը կազմված էր բացառապես այս երգի մոտ 15 մեկնաբանություններից՝ ստեղծված արևմտաեվրոպական և հայ կոմպոզիտորների կողմից: Իր տեսակի մեջ եզակի այդ համերգի գեղարվեստական-կատարողական նպատակադրումը երաժշտական տարբեր դարաշրջանների ու ոճերի գեղագիտական կարելությունների բացահայտումն էր՝ 20-րդ դարի մարդու հայեցակետից:

Լուսինեն ավելի էր մերձենում դասական երաժշտությանը, և նրա երգացանկը դարձավ ավելի բազմազան: 1974 թ. Փարիզի «Պալատե կոնգրե»-ում Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ, նվաճեց Փարիզի մեծ բեմը: Անմոռանալի էին «Անուշի» նախերգանքի և Անուշի խելագարության տեսարանի երգչախմբի և Լուսինե Զաքարյանի կատարումները:

Ինչպես նշում է Լևոն Միրիջանյանը, միայն այդ փաստը, որ Հռոմի Պապը Լուսինե Զաքարյանին բացառության կարգով արտոնեց երգել Փարիզի Աստվածամոր տաճարում, հերիք էր, որ նա համարվեր համաշխարհային, տիեզերական մեծություն:

Սուսաննա ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԱՐԲՆՈՑԸ

Այսօր շատ է խոսվում գիտության առաջնահերթության և նրա հետագա զարգացման խնդիրների մասին: Ստորև ներկայացնում եմ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի վերջին 10 տարիների գործունեության ամփոփ շարադրանքը:

2007 թ. շրջադարձային տարի էր Հայաստանում տնտեսագիտական հետազոտությունների իրականացման ենթակառուցվածքների զարգացման համար, քանի որ ՀՀ կառավարության կողմից 2007 թ. մարտի 7-ին ընդունվեց (Տնտեսագիտական ուղղվածություն ունեցող գիտական կազմակերպությունների վերակազմակերպման մասին) թիվ 271-Ա որոշումը, որով խնդիր էր դրվել ճյուղային ենթակայության 3 ինստիտուտներ՝ «Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ», «Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ» ու «Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ները միացման ձևով վերակազմակերպել և միացնել «ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին: Արդյունքում ձևավորված միացյալ տնտեսագիտության ինստիտուտը կարճ ժամանակ անց վերածվեց ժամանակակից թեմատիկայով, անհրաժեշտ հետազոտությունների իրականացման համար զարգացած ենթակառուցվածքներով կայացած գիտահետազոտական կենտրոնի, որի 10-ամյա գիտակազմակերպչական գործունեությունը ներկայացվում է ստորև:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գործունեությունը եղել է խիստ հրապարակային և հասանելի հասարակության յուրաքանչյուր անդամի համար: Բավական է նշել, որ ինստիտուտի հրատարակած գրքերի էլեկտրոնային տարբերակները հասանելի են ինստիտուտի էլեկտրոնային կայքի «Հրապարակումներ» բաժնում: Ինստիտուտի 2006-2016 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքներն արտացոլված են նույնանուն հաշվետվության մեջ, որը նույնպես տեղադրված է էլեկտրոնային կայքի «Հրապարակումներ» բաժնում:

Ամփոփելով ինստիտուտի տասնամյա գիտակազմակերպչական գործունեությունը՝ կարելի է փաստել.

1. Հրատարակվել են՝

■ Գիտական հոդվածների 18 ժողովածու՝ նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին.

■ 105 գիրք (գիտահետազոտական աշխատանք).

■ 1585 գիտական հոդված, 231-ը՝ միջազգային հանդեսներում:

2. Ինստիտուտի 2 երիտասարդ գիտաշխատողներ պաշտպանել են դոկտորական ատենախոսություն:

3. Ինստիտուտի 154 հայցորդ ու ասպիրանտ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն. 7-ը Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ են:

4. Ինստիտուտի գիտաշխատողներից մեկի մենագրությունն արժանացել է Մ. Գոշի անվան 1-ին, մյուսինը՝ 2-րդ կարգի մրցանակի:

5. Ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողներից մեկի գիտահետազոտական աշխատանքը 2013 թ. ճանաչվել է լավագույն գիտական աշխատանք:

6. Ինստիտուտի 3 գիտաշխատողներ դարձել են «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի կրկնակի հաղթողներ (Աշոտ Բայադյան, Վլադիմիր և Դավիթ Հարությունյաններ):

Հիշատակության է արժանի նաև ինստիտուտի՝ եռալեզու նորացված էլեկտրոնային կայքը (www.economics.sci.am): Կայքի դիզայնն իրականացվել է՝ ինտերնետ միջավայրի ժամանակակից պատկերացումներին և պահանջներին համահունչ: Ըստ որդեգրած քաղաքականության՝ կայքում բաց մատչելիությամբ տեղադրվում են ինստիտուտի հրատարակած հոդվածների և գրքերի էլեկտրոնային տարբերակները: Կայքն ըստ էության վերածվել է հայ տնտեսագիտական հանրության՝ տեղեկատվություն ստանալու և մտքեր փոխանակելու միասնական հարթակի:

Ինստիտուտի գիտակազմակերպչական գործունեության վերջին տասնամյակը կարելի է գնահատել որպես «պատվավոր տարեգրություն», որը բնութագրվում է գալիք սերունդներին ավանդվող հետևյալ հիշարժան հետազոտություններով.

■ «Ազգային տնտեսություն: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետագիծը (2007-2017) եզրակացություններ, կիրառական առաջարկություններ» գիրք-ժողովածուն (շուրջ 500 էջ), որը բացառիկ է և՛ գիտական, և՛ բուհական համակարգում: Ի դեպ ժողովածուում ընդգրկված կիրառական առաջարկությունները ամեն տարի ներկայացվել են ՀՀ կառավարությանը: 2008 թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը օրենսդրական նախաձեռնությամբ Աժ է ներկայացրել, և 2009 թ. հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը և «Հաստատագրված վճարների մասին» օրենքի առանձին դրույթներ: Իսկ որոշ կիրառական առաջարկություններ արտացոլվել են ՀՀ կառավարության որոշումներում և ընդունված ռազմավարական փաստաթղթերում:

■ Ռ. Սարինյանի և Վլ. Հարությունյանի «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան» (երկհատոր) աշխատությունը. այն միակն է հանրապետությունում բոլոր մասնագիտությունների գծով և ամփոփում է XIX դարի կեսերից սկսած «հայ տնտեսագիտական մտքի անցած ուղին, հետազոտական շրջանակների հետագիծը, տնտեսական հարցերի բարդ ու հակասական լուծումները, վերելքների ու վայրէջքների պատմությունը»: Աշխատությունը կարող է օգտագործվել որպես հանրագիտարանային տեղեկատու. այն ունի նաև աղբյուրագիտական նշանակություն:

■ Վլ. Հարությունյանի և Ռ. Սարինյանի «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում: 2006-2016 թթ. հետազոտական արդյունքների ուրվագիծ» (տեսական հետազոտությունների համատեքստում) գիրքը:

■ Տնտեսագիտության ինստիտուտի 2006-2016 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքներին վերաբերող ստվարածավալ հաշվետվությունը (շուրջ 574 էջ):

■ «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտական հոդվածների 18 ժողովածուները:

■ Վլ. Հարությունյանի, Տ. Հարությունյանի և Դ. Հարությունյանի «Հարկեր և հարկագանձում» աշխատությունը (շուրջ 600 էջ): Սույն աշխատության մեջ մանրամասնորեն ներկայացված են հարկերի անհրաժեշտությունը, ծագման ու ձևավորման էվոլյուցիան, գործառույթները և տեսակները, ինչպես նաև հարկման սկզբունքները և տեսաիրավական հիմքերը: Այնուհետև բարեխղճորեն վերլուծվում են հարկային օրենսդրության ձևավորման ու բարեփոխման էվոլյուցիան՝ ըստ հարկատեսակների (բարդ ու աշխատատար գործ), հարկային պարտավորությունների հաշվառման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը ՀՀ-ում (կրկին ըստ հարկատեսակների): Այնուհետև միանգամայն տրամաբանորեն ներկայացված են հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական և մեթոդաբանական մոտեցումները ՀՀ-ում (ըստ հարկատեսակների):

Հետազոտության վերջում հեղինակները կարևորել են ՓՄՁ-ների տեղն ու դերը տնտեսության զարգացման մեջ, հատուկ ուշադրություն են դարձրել նաև ՓՄՁ-ները հարկելու հիմնախնդիրներին:

Քննարկված հարցերի համատեքստում էլ կարևորվում է նշված հետազոտության կարևորությունն ու օգտակարությունը:

■ Տ. Հարությունյանի «Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը (266 էջ), որում ամբողջականորեն դիտարկվում են տնտեսության զարգացման և կարգավորման հարկային լծակների ձևավորման և կիրառման տեսական և մեթոդաբանական հիմքերն ու առանձնահատկությունները և հարկային քաղաքականության ու հարկային վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու հիմնահարցերը:

■ Դ. Հարությունյանի «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գիրքը (շուրջ 464 էջ), որում հեղինակն անդրադառնում է վճարային հաշվեկշռի ձևավորման ու կարգավորման հիմնախնդիրներին, ինչպես նաև վերլուծում ընթացիկ հաշվի պետական կարգավորման և արտաքին տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում:

■ Յու. Սուվարյանի և մյուսների «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» աշխատությունը (շուրջ 150 էջ):

■ Վլ. Հարությունյանի «Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունը:

■ Ռ. Սարինյանի և Վլ. Հարությունյանի «Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան): Գիտակենսագրական ուրվագծեր» աշխատությունը (շուրջ 280 էջ), որը վերաբերում է մինչքեյնսյան շրջանի տնտեսագետներին՝ սկսած մերկանտիլիստներից: Հարկ է նաև հավելել, որ հետազոտության մեջ ընդգրկված անունները ենթադրում են որոշակի պայմանականություն. շատերը կարող էին տեղ գտնել այս գրքում, սակայն ներկայացված գիտակենսագրական ուրվագծերն ամբողջացնում են մինչքեյնսյան շրջանի տնտեսագիտական միտքն ընդհանուր առմամբ:

■ 2017 թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները, որում ներկայացված կիրառական առաջարկությունները վերաբերում են Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսությունը կրճատելուն, միջուկային էներգետիկան զարգացնելուն և այլն:

■ Վլ. Հարությունյանի և Ռ. Սարինյանի «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական ուղին» աշխատանքը (152 էջ), որում ինստիտուտի հետազոտական ուղին ներկայացված է երկու՝ խորհրդային և շուկայական տնտեսությունների շրջաններով:

Ինստիտուտի գիտահրատարակչական գործունեությունը հարստացնելու քայլ պետք է համարել միջգիտակարգային հետազոտություններ իրականացնելը, որն առնչվում է ցեղասպանության նյութական կորուստները գնահատելուն և փոխհատուցելուն. հրատարակվել են ստորև բերվող աշխատանքները:

■ Ա. Խ. Աստոյան, Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները հայոց ցեղասպանության տարիներին, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 320 էջ + 40 էջ ներդիր:

■ Է. Նավոյան, Հայկական հարցը միջազգային խորհրդաժողովներում և պայմանագրերում (1878-1923 թթ.), (պատմական, իրավական և տնտեսական վերլուծություն), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 166 էջ:

■ Ա. Հ. Ոսկանյան, Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը, 1909թ, Ունեզրկում: Գիրք Ա, Եր., «Գիտություն» հրատ., 2017, 208 էջ + 24 էջ ներդիր:

■ «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու, Խմբ.-մբ՝ Ա. Մարուքյանի, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 184 էջ:

Ի դեպ, ինստիտուտի հրատարակած գրքերը առաքվել են ՀՀ նախագահին, ՀՀ վարչապետին, ՀՀ կառավարության անդամներին, ՀՀ կենտրոնական բանկի նախագահին, ՀՀ ԳԱԱ ղեկավարությանը, ՀՀ ԳԱԱ նախագահության բոլոր անդամներին, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բոլոր ինստիտուտների տնօրեններին, ԼՂՀ և ՀՀ բոլոր բուհերի ռեկտորներին և գրադարաններին, հանրապետության հայտնի տնտեսագետներին, Աժ ղեկավարությանը և հանձնաժողովների նախագահներին, իսկ հայոց ցեղասպանությանը վերաբերող գրքերը՝ նաև դեսպանատներ:

Անտարակույս այս բոլոր հաջողությունները պայմանավորված են ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանի ամենօրյա և վիթխարի աշխատանքով:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

ՄԵԾԱՀԱՄԲԱՎ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ակադեմիկոս Դավիթ Սեդրակյանի 80-ամյակը

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր, գերխիտ աստղերի ֆիզիկայի համաշխարհային ճանաչում ստացած վաստակաշատ գիտնական Դավիթ Միհերի Սեդրակյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55 տարին:

Ծնվել է 1938թ. դեկտեմբերի 9-ին Երևանում: 1955թ. ոսկե մեդալով ավարտելով Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը՝ Դ. Սեդրակյանն ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի «Ֆիզիկա» բաժինը: 1961թ. նա գերազանցությամբ ավարտել է համալսարանը և 1962թ. ընդունվել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Պ.Ն. Լեբեդևի անվ. Ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Այդտեղ Դ. Սեդրակյանը 1964թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ լիցքավորված մասնիկի դիֆրակցիոն ճառագայթման թեմայով, վերադարձել է Երևան և սկսել իր աշխատանքային գործունեությունը դոցենտի պաշտոնում՝ ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում: 1972թ. նա հաջողությամբ պաշտպանել է դոկտորական թեզ՝ ,Պտտվող երկնային մարմինների տեսությունե թեմայով, 1975թ. արժանացել պրոֆեսորի կոչման:

1977-1986թթ. ղեկավարել է ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնը՝ միաժամանակ շարունակելով ակտիվ գիտական գործունեությունը: 1982թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1990թ.՝ ակադեմիկոս, 1986-1994թթ. աշխատել ՀՍՍՀ ԳԱ Նախագահությունում՝ ակադեմիկոս-քարտուղարի, ապա փոխնախագահի պաշտոններում: 1994թ. Սեդրակյանը ԵՊՀ-ում ղեկավարել է Վ. Համբարձումյանի անվ. ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնը: Ներկայումս ամբիոնի պատվավոր վարիչն է, ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի՝ հիմնականում նրա ջանքերով կազմակերպված քվանտային երևույթների հետազոտման և մոդելավորման լաբորատորիայի գլխավոր գիտաշխատող է:

Դ. Սեդրակյանի հաջողությունները գիտության մեջ նշանակալից են, հատկապես տեսական աստղաֆիզիկայի ոլորտում: Դրանք ներառում են գերխիտ երկնային մարմինների պտույտի պրոբլեմը, պտտվող նեյտրոնային աստղերում մագնիսական դաշտի առաջացումը, բաբախիչների ռադիոճառագայթման մեխանիզմները, ինտենսիվ գրավիտացիոն ալիքների ճառագայթման աղբյուրների գոյության հնարավորությունները: Նրա ընդհանուր հարաբերականության տեսության շրջանակներում ստացած լուծումը գիտական մեծ արժեք ունեցավ՝ առաջարկելով պտտվող կոնֆիգուրացիաների պարամետրերի հաշվման նոր մեթոդ: Այն հաստատեց անգլիացի է. Հյուիշի առաջադրած գիտական վարկածը, ըստ որի բաբախիչները պտտվող նեյտրոնային աստղեր են: Հիշյալ մեթոդը հետագայում հիմք դարձավ պտտվող երկնային մարմինների նոր մոդելների հաշվման համար:

Դիտարկելով նեյտրոնային և պրոտոնային գերհոսելի կոնդենսատների փոխազդեցությունը, Դ. Սեդրակյանը հայտնաբերում է նոր ֆիզիկական երևույթ՝ ներկայումս հայտնի ,տարման էֆեկտե անունով: Վերջինիս շնորհիվ բաբախիչներում գերհոսելի նեյտրոնների քվանտային թելերը ստեղծում են պրոտոնային թելեր, որոնք գեներացնում են դիտվող հզոր մագնիսական դաշտերը: Դ. Սեդրակյանի առաջարկած բաբախիչների ռադիոճառագայթման մեխանիզմը սկզբունքորեն տարբերվում է մինչ այդ եղած առաջարկներից: Ըստ նրա՝ ճառագայթումը կազմավորվում է աստղի միջուկի և կեղևի սահմանին և դուրս է գալիս մագնիսաձայնային և Ալֆվենյան ալիքների միջոցով:

Դ. Սեդրակյանի աշխատանքների մյուս ցիկլը վերաբերում է բաբախիչների պտտական շարժման դիտվող դանդաղեցմանը, որն ուղեկցվում է անկյունային արագության ,ցատկերովե: Ելնելով իր այն հիպոթեզից, թե իր կողմից հայտնաբերված նեյտրոնային թելերի ցանցը աստղի պտույտի դանդաղեցմանը զուգընթաց աստիճանաբար նոսրանում է, Դ. Սեդրակյանն իր աշակերտների հետ առաջարկում է բաբախիչների պտտական շարժման արգելակման երեք մեխանիզմ և ի հավելումն գտնում, որ դանդաղեցման ժամանակ, մակերևույթի ջերմաստիճանի աճի շնորհիվ աստղը դառնում է ռենտգենյան ճառագայթման աղբյուր: Ստացված օրինաչափությունները համահունչ են տիեզերքից եկող ռենտգենյան ճառագայթմանը վերաբերող դիտողական օրինաչափություններին:

Սկսած 1994թ. Դ. Սեդրակյանը՝ նեյտրոնային աստղերի տեսական հետազոտություններին զուգահեռ, իր գործընկերների հետ կատարել է գիտական ուսումնասիրություններ՝ ուղղված էլեկտրոնների կողմից պոտենցիալային արգելքների անցման և անդրադարձման գործակիցների հաշվումներին, էլեկտրոնների հնարավոր տեղայնացման (լոկալիզացման) խնդիրներին: Ներկա էտապում նա առավել կարևորում է կոմպակտ երկնային օբյեկտներից գրավիտացիոն ճառագայթման խնդիրը: Ակնկալվում է, որ մշակվող մոտարկումները կիրառելի կլինեն նաև կիսահաղորդչային նանոկառուցվածքներում էլեկտրոնների շարժման հատկությունների, պարբերական միջավայրերում ալիքների տարածման օրինաչափությունների հետազոտության համար:

Բեղմնավոր է նաև Դ. Սեդրակյանի ուսումնամանկավարժական գործունեությունը: Մոտ 30 տարի ամբիոնի ղեկավարության ընթացքում ամբիոնի 12 աշխատակիցների կողմից պաշտպանել են 12 դոկտորական և 11 թեկնածուական ատենախոսություններ, իսկ դրանցից 4 դոկտորականը և 10 թեկնածուականը պաշտպանվել են նրա անմիջական ղեկավարությամբ:

Մոտ 300-ի հասնող գիտական հոդվածները ակադեմիկոս Դավիթ Սեդրակյանին հետազոտությունների իր ասպարեզում բերել են միջազգային լայն ճանաչում: Նա բազմիցս հրավիրված ելույթներով հանդես է եկել տարբեր երկրներում կազմակերպված միջազգային կոնֆերանսներում (Ֆրանսիա, ԱՄՆ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա) և այլն: Նրա հետ համագործակցում են առաջատար գիտնականներ աշխարհի խոշոր գիտական կենտրոններից, ինչպիսիք են Կոռնելի և Ռոստոկի համալսարանները, Լոզանի և Փարիզի աստղաֆիզիկական կենտրոնները, Մոսկվայի Լեբեդևի անվ. ֆիզիկայի ինստիտուտը և այլն: Դ. Սեդրակյանը եղել է մի շարք միջազգային կոնֆերանսների և թեմատիկ սեմինարների ակտիվ կազմակերպիչներից, երկար տարիներ հանդիսացել «ՀՍՍՀ ԳԱ Զեկույցներ» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալը, ապա ՀՀ ԳԱԱ ,Աստղաֆիզիկաե ամսագրի գլխավոր խմբագիրը: Դ. Բլաշկեի հետ շարունակաբար նա կազմում և հրատարակում է «Superdense QCD Matter and Compact Stars» միջազգային հանդեսը, համախմբագիր է Վ. Համբարձումյանին նվիրված վերջերս հրատարակված «Ambartsumian's Legacy and Active Universe» գրքի:

Դավիթ Սեդրակյանը «Ստացիոնար աքսիալ-սիմետրիկ դաշտերը էյնշտեյնի տեսությունում» աշխատանքի համար 1970թ. ստացել է ՀԼԿԵՄ մրցանակ, 1999թ. արժանացել է Անանիա Շիրակացու մեդալի: Լինելով գործուն խառնվածքի տեր, նա քաղաքացիական մտահոգությամբ է արձագանքում հասարակական կյանքի խնդիրներին: Նրա մեջ լայն ճանաչում ստացած գիտնականի կողքին մշտապես առկա է մնում ակտիվ, օբյեկտիվ օրինաչափությունների հենքի վրա զարգացման ճանապարհներ փնտրող քաղաքացին:

Շնորհավորելով մեր գործընկերոջը հոբելյանի կապակցությամբ, մաղթում ենք նրան քաջառողջ կյանքի երկար տարիներ և գիտական-ստեղծագործական նոր ձեռքբերումներ:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք

Օրինակելի դպրոց, օրինակելի տնօրեն

Այս դպրոցի հենց մուտքից զգում ես նրա շահեկան տարբերությունը մյուս դպրոցներից, սաների հետ զրուցելիս նկատում ես նրանց կրթվածության բարձր մակարդակը, դպրոցի շենքի ներսում ու բակում շրջելիս տեղափոխվում ես մի այլ աշխարհ, ապրում հիացմունքի պահեր… Այդ դպրոցը Արմավիրի մարզի՝ մայրաքաղաքից տասնյակ կիլոմետրեր հեռու՝ սահմանին մերձ գտնվող Գետաշեն գյուղի միջնակարգ դպրոցն է:

Դասատվությունն այս կրթօջախում իրականացվում է կաղապարներից դուրս, արդյունաբեր եղանակներով: Գյուղատնտեսության ուսուցումն այստեղ ամուր հիմքերի վրա է դրված. հողագործությունը ուսումնական ծրագրի պարտադիր բաղադրիչն է, դրա համար էլ կրթօջախը կոչվում է ագրոդպրոց: Հանրակրթական այս դպրոցում աշակերտները հեշտությամբ և՛ այգեգործություն են սովորում, և՛ բանջարաբուծություն:

Դպրոցին երկրագործական ուղղվածություն տալու առաջին քայլը, տնօրեն, մասնագիտությամբ գյուղատնտես Գևորգ Մուքոյանի մտահղացմամբ դպրոցի անմշակ տարածքի կանաչապատումն էր. առաջինը ծառեր տնկեցին. սաները և ուսուցչական կազմը, անշուշտ տնօրենի մասնակցությամբ, դպրոցի հարակից անմշակ տարածքը պտղատու այգի դարձրին: Որդեգրվեց հայեցի մոտեցում՝ տնկեցին բացառապես ծիրանենիներ՝ աշակերտների թվով՝ 270:

Աշակերտները հաճույքով են մասնակցում գյուղատնտեսական աշխատանքներին:

Ստացված բերքը ճաշարանին է տրվում. դպրոցում աճեցրած բան-

ջարեղենով և ՄԱԿ-ի պարենով ամբողջ տարի մոտ 140 երեխա անվճար սնունդ է ստանում: Բերքը անգամ պահեստավորվում է ձմռան համար:

Ագրոդպրոցի նպատակներից մեկն էլ երեխաներին հող մշակել ու սեփական տնտեսությունը վարել սովորեցնելն է (ծրագրի հեղանակը տնօրենն է):

Դպրոցի ետնամասում կա ջերմատուն, ընթացքի մեջ է անասնագոմի հիմնումը: Ջերմատունը ծառայում է նաև ընդհանուր կրթության գործին, այն է՝ երեխաները ստանում են տեսական գիտելիքներ, ապա դրանք կիրառում նույն ջերմատանը կամ բաց դաշտում. արդեն կան ագրոդպրոցի զարգացման ծրագրով հետաքրքրվող տնօրեններ:

Կրթօջախում դասարանները ևս ավանդական չեն, աշակերտներն իրենց դասաժամերը շոգ ժամանակ անցկացնում են դրսի այլընտրանքային բացօթյա տաղավար դասարաններում, որոնք տեղկայված են դպրոցի այգում. դասերը շոգ դասարանի փոխարեն անցկացնում են զով տաղավարում:

Դպրոցն ունի նախակրթարան:

Դպրոցի կրթական ծրագրի բաղկացուցիչ մասն են կազմում արտադասարանային խմբակները: Տնօրենը կարծում է, որ իրենց մոդելը, մոտեցումները՝ ժամանակակից դպրոցի վերաբերյալ, պետք է տարածել, քանզի ապացուցված է, որ շատ ճիշտ է, երբ հանրակրթությունից զատ դպրոցում իրականացվում է նաև այլընտրանքային կրթություն: Դպրոցում կա 3 լրացուցիչ կրթական բլոկ՝ իր խմբակներով՝ արհեստների և արվեստների, լեզուների խորացված ուսուցման, բնագիտության, ագրո և էկո: Անվճար խմբակներ են սրանք, ուր երեխան կարող է գնալ դասերից հետո:

Գետաշենի դպրոցն աչքի է ընկնում սաների բարձր կրթական մակարդակով ու բանիմացությամբ, ինչը ապացույց է հոգտար աշխատանքի: Այստեղ իրականացվում է ներառական կրթություն, որը եթե ոչ հանրապետությունում, ապա հաստատ մարզում հայտնի է իր որակական արժանիքներով:

Այս հաստատությունը սովորողներին ազատում է ամեն տեսակ կաղապարներից ու կաշկանդումներից, երեխաներն ունեն ազատ ստեղծագործելու, դրսևորվելու իրավունք և հնարավորություն:

Բույսեր խնամելը սոսկ այգեգործական ու բանջարագործական հմտություններ չի տալիս դպրոցականին, այլև կապում է նրան բնությանը, հայրենի բնությանը, դրանով՝ նաև հայրենիքին, սրանից զատ՝ սերմանում է աշխատասիրություն:

Հայրենասիրական դաստիարակությունը, ինչը այսօր մեր կրթօջախներում բավարար մակարդակով չի իրականացվում կամ ընդհանրապես չի իրականացվում, այս ուսումնական հաստատությունում ևս դրված է ամուր հիմքերի վրա:

Եվ այս ամենը՝ առաջին հերթին տնօրենի շնորհիվ. նա օգտագործում է ամեն առիթ ու հնարավորություն աշակերտների մեջ հայրենիքի ու գեղեցիկի նկատմամբ սեր առաջացնելու համար:

Այս դպրոցում աշակերտներն իրենց զգում են ինչպես տանը. տնօրենը նրանց համար ծնող է, դպրոցը՝ ընտանիք ու հարազար օջախ:

Դպրոցի դիրքը անգամ համապատասխան է նրա կրթադաստիարակչական դավանանքին. բակից երևում է բիբլիական Արարատը՝ հայ ժողովրդի հավերժության խորհրդանիշը, և դպրոցի եթե ոչ այսօրվա, ապա վստահաբար վաղվա շրջանավարտները լինելու են այն գերությունից ազատողների շարքերում:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայ գիտնականները մասնակցել են բարձր էներգիաներով նեյտրինոների ճառագայթման աղբյուրի բացահայտման աշխատանքներին

Գիտնականների միջազգային խումբն աշխարհում առաջին անգամ հայտնաբերել է ժամանակակից բարձր էներգիաների աստղաֆիզիկիայի ամենաարդիական և կարևոր օբյեկտներից մեկի՝ բարձր էներգիաներով նեյտրինոների ճառագայթման տիեզերական աղբյուր: Հետազոտությունների արդյունքները հրապարակվել են հեղինակավոր «Scince» ամսագրում:

Խմբի կազմում ընդգրկված են նաև ՀՀ ԳԱԱ «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպության գիտնականները: Նրանք, համագործակցելով Մյունխենի տեխնիկական համալսարանից էլիզա Ռեսկոնիի գլխավորած խմբի, Եվրոպական Հարավային աստղադիտարանից Պաուլու Պադովանիի և Իտալիայի տիեզերական գործակալությունից Պաուլո Ջիոմիի հետ, ստացել են կարևոր արդյունք՝ Հարավային բևեռում տեղակայված LceCube դիտակով գրանցված նեյտրինոները միանշանակորեն առաջանում են մեր մոլորակից չորս միլիարդ լուսատարի հեռավորությամբ տիեզերական աղբյուրից՝ բլազարից: Նեյտրինոները գրեթե լույսի արագությամբ շարժվող մասնիկներ են, որոնք կարող են առանց կլանման անցնել միլիարդավոր լուսային տարիների հեռավորություններ՝ հնարավորություն տալով ուսումնասիրելու տիեզերքի ամենահեռավոր աղբյուրները:

LceCube նեյտրինոների դիտակի և տարբեր էներգիական տիրույթներում գործող մի շարք այլ դիտակների (օրինակ՝ *MAGIC* միջազգային համագործակցությունը, որի լիիրավ անդամ է նաև «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն»-ը՝ սկսած 2018 թ.) ուսումնասիրությունների արդյունքում առաջին անգամ հնարավոր եղավ միաժամանակ գրանցել նեյտրինոներ և ֆոտոններ միևնույն աղբյուրից: Ինչպես նշեց ՀՀ ԳԱԱ «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպության տնօրեն Նարեկ Սահակյանը, «2017 թ. սեպտեմբերի 22-ին նեյտրինոների գրանցումից հետո մեր գործընկերների հետ սկսեցինք մանրամասն ուսումնասիրել գրանցված ազդանշանի ուղղության մոտ 1,33 աստիճան շառավղով երկնային տիրույթը: Համադրելով տարբեր ալիքային տիրույթների դիտակների օգնությամբ գրանցված տվյալները՝ կարողացանք բացառել հնարավոր բոլոր այլ աղբյուրների ազդեցությունը և միանշանակ պնդել, որ TXS 0506+056 օբյեկտն է գրանցված նեյտրինոների ճառագայթման աղբյուրը»:

Նեյտրինոների գրանցման և դրանց ծագման աղբյուրների բացահայտման շնորհիվ կարելի է համարել, որ սկիզբ դրվեց նոր ուղղության՝ «բազմանցուղային» աստղաֆիզիկային, երբ միևնույն աղբյուրում տեղի ունեցող պրոցեսներն ուսումնասիրվում են՝ գրանցելով ֆոտոններ և նեյտրինոներ:

«ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպությունն ստեղծվել է ՀՀ ԳԱԱ կազմում 2016 թ.-ին: Կենտրոնի գործունեության հիմնական խնդիրը ռելյատիվիստական աստղաֆիզիկայի, աստղամասնիկային ֆիզիկայի, ռենտգենյան աստղաֆիզիկայի, բարձր և գերբարձր էներգիաների գամմա-աստղաֆիզիկայի, բարձր էներգիաների նեյտրինո-աստղաֆիզիկայի բնագավառներում տեսական և հաշվողական հետազոտությունների իրականացումն է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՆՇԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

ԿՈՇՏՈՅԱՆՑ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԵԴՐԱԿԻ



Ծնվել է 1900 թ., Ալեքսանդրապոլում (այժմ Գյումրի): 1917-ին էքստերն կարգով հանձնելով հասունության ատեստատի քննությունները գիմնազիայում դառնում է Պյատիգորսկի ժողովրդական համալսարանի բնական բաժանմունքի ունկնդիր: 1921-ին ընդունվում է Կուբանի (Կրասնոդար) բժշկական ինստիտուտը, իսկ 1922-ին տեղափոխվում և ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, որն էլ ավարտում է 1926-ին: Դեռ ուսումնառության տարիներին նա կատարում և հրատարակում է իր առաջին գիտական աշխատանքները, որոնք խրախուսվել են նշանավոր գիտնականներ Վ. Մ. Առնոլդի և Բ.Լ. Իսաչենկոյի կողմից: 1929-ին ավարտել է Մոսկվայի Տիմիրյազևի անունը կրող կենսաբանական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան՝ կենդանիների ֆիզիոլոգիա մասնագիտությամբ: Ասպիրանտական ուսումնառության վերջին տարում՝ 1928-ին, Խ. Կոշտոյանցին ընդունում են Մոսկվայի համալսարանի Ա. Ֆ. Սամոյլովի և Ն. Լ. Կանի կողմից ղեկավարվող ֆիզիոլոգիայի ամբիոնի ասպիրանտուրան, որի հետ նա մնում է կապված իր ողջ կյանքի ընթացքում: Ասպիրանտուրան ավարտելուց հետո Խ. Կոշտոյանցն աշխատում է կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1930-ից՝ պրոֆեսոր, իսկ 1943-ից՝ ամբիոնի վարիչ, միաժամանակ ղեկավարելով Կ. Ա. Տիմիրյազևի անվան կենսաբանական ինստիտուտի համեմատական ֆիզիոլոգիայի բաժինը:1936-51 թթ. ղեկավարում է Ա. Սևերցովի անվան կենդանիների մորֆոլոգիայի ինստիտուտի էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի բաժինը, 1936-44 թթ. զբաղեցրել է նույն ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը: 1942-45 թթ. Խ. Ս. Կոշտոյանցը եղել է ՀՍՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, 1943-46 թթ.՝ ԳԱ-ի կենսաբանական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը:1946-50 թթ. եղել է ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Մեծանուն ֆիզիոլոգի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են ֆիզիոլոգիական գիտության զանազան բաժիններ՝ մարսողությունից մինչև նյարդային համակարգի միջնորդանյութային գործընթացները: Սակայն նրա հիմնական գիտական աշխատանքները նվիրված են օրգանիզմի ֆունկցիաների էվոլյուցիայի և էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի տեսական հիմքերի պրոբլեմներին, որոնք ամփոփված են նրա «Համեմատական ֆիզիոլոգիայի հիմունքներ» երկհատորյակում (հատոր 1՝ 1951, հատոր 2՝ 1957), որոնք կարևոր դեր են խաղացել նյարդային գործունեության հիմքում ընկած քիմիական մեխանիզմների ձևավորման պատկերացումներում: Նա մշակել է նյարդի գրգռման ֆերմենտաքիմիական միջնորդանյութային վարկածը (գրգռի հաղորդումը նյարդից էֆեկտորին)՝ կապված նյութափոխանակության փոխներգործության գործընթացների և նրանց սպիտակուցային կառույցների հետ: Նա պարզել է, որ սինապսային հաղորդումն արդյունք է նախա- և հետսինապսային կառուցվածքների նյութափոխանակության շարժընթացների փոխներգործունեության: Նա դրդումը դիտում է որպես կենսաքիմիական-էնզիմաքիմիական գործընթաց, պարզել ացետիլխոլին միջնորդանյութի սպիտակուցային բնույթը: Խ. Ս. Կոշտոյանցը համոզված էր նրանում, որ բջջից բջիջ գրգռի հաղորդման հիմքում ընկած են քիմիական մեխանիզմները: Խ. Ս. Կոշտոյանցի կյանքի կարևոր շրջաններից է Ի. Պ. Պավլովի կողմից ղեկավարվող պատվիրակության կազմում նրա մասնակցությունը և զեկուցումով հանդես գալը ֆիզիոլոգների 14-րդ Միջազգային կոնգրեսի աշատանքներին:

Նա փորձերով ապացուցել է օրգանիզմի ռեակցիաների կարգավորման հնարավորությունը՝ պայմանավորված նյութափոխանակային որոշակի տարրերի ուղղվածային փոփոխմամբ, օրգանիզմի համակարգերի գործառական ակտիվության փոփոխմամբ, ազդելով նյութափոխանակային գործընթացների վրա: Նշված ասպեկտներով ուսումնասիրելով կմախքային մկանների և սրտամկանի կենսահոսանքները Խ. Կոշտոյանցը ցույց է տվել սպիտակուցային մարմինների՝ ֆիբրինոգենի, մկանային սպիտակուցների սպիտակուցային մոլեկուլներում առկա սուլֆիհիդրիլային խմբերի առանձնահատուկ դերը: Ապացուցել է, որ միջնորդանյութի կապումը նյարդային վերջույթներում իրականացվում է մասնագիտցված սպիտակուցների կողմից, որոնք ունակ են պարբերաբար հետ փոխել կառուցվածքն ու կատարել գործառույթը: «Սպիտակուցային մարմիններ, նյութափոխանակություն և նյարդային կարգավորում» (1951) մենագրության համար հայազգի ֆիզիոլոգն արժանանում է Մ. Վ. Լոմոնոսովի անվան մրցանակի, իսկ «Ուրվագծեր Ռուսաստանի ֆիզիոլոգիայի պատմության» մենագրության համար՝ ԽՍՀՄ Պետական մրցանակի (1947): Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խ. Ս. Կոշտոյանցը մասնակցել է զինվորներին վիտամիններով ապահովելու ու մատակարարման գործին:

1930-31 թթ. Խ. Ս. Կոշտոյանցը աշխատել է Բեռլինի համալսարանում և Ուտրեխտի համալսարանի համեմատական ֆիզիոլոգիայի լաբորատորիայում: Վերադառնալով Մոսկվա զբաղեցրել է ՄՊՀ-ի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի լաբորատորիայի պրոֆեսորի պաշտոնն ու կարդացել «Ընդհանուր և համեմատական ֆիզիոլոգիայի» դասախոսությունների դասընթացը: Միաժամանակ կազմակերպում է Կ. Ա. Տիմիրյազևի անվան կենսաբանական ինստիտուտի համեմատական ֆիզիոլոգիայի լաբորատորիայի աշխատանքները՝ հետագայում դառնալով այդ ինստիտուտի փոխտնօրեն:

1930-ին Խ. Կոշտոյանցին շնորհվում է կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ու պրոֆեսորի կոչում, 1939-ին ընտրվում է ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ:

Խ. Ս. Կոշտոյանցը ընտրվել է գիտության պատմության Միջազգային ակադեմիայի իսկական անդամ, Հունգարիայի ԳԱ պատվավոր ակադեմիկոս, Կարլովա համալսարանի, Ֆիննական գիտական միավորման պատվավոր դոկտոր, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի, Հնդկաստանի գիտական ընկերությունների ու կազմակերպությունների անդամ: Նրա աշխատությունները թարգմանված ու հրատարակված են բազմաթիվ լեզուներով: Հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատանքների:

Խ. Ս. Կոշտոյանցը մահացել է 1961 թ. ապրիլի 2-ին, հանգչում է Մոսկվայի Նովոդևիչյե գերեզմանատանը:

Խաչիկ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ակադեմիկոս Լևոն Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մեր մեծերի պատգամները

Խաչատուր Աբովյան. հայ մեծ լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր



Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին ղուրբան. տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, մեր հավատը ղայիմ բռնեցեք...

«Օրհնվի էն սհաթը, որ ռսի օրհնած ոտն հայոց լիս աշխարհը մտավ ու Ղզլբաշի չար շունչը հալածեց մեր երկրից: Աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, ու մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռքի տակ բերեց...»:

...Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները:

Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եղիշեի Վարդանանց պատերազմը, Նարեկացու խոսքը անմահության և հավերժության հետ և Աբովյանի «Վերքը»: Այս նվիրական գրքի մեջ հրեղեն լեզվով արտահայտվում է մեր ժողովրդի խորագին վիշտը, նրա պայքարը և անշիջանելի պաթոսը ...

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Աբովյանի մեջ խտացված են Մաշտոցի դիվանագիտական հանճարը, Խորենացու հայրենասիրական կրակը, Նարեկացու կատարելության աղոթքը: Աբովյանը մեր ազգային ոգու մարմնացումն է: Եվ եթե ինչոր չափով հաղորդվել եմ այդ ոգուն, և իմ մեջ կրում եմ այդ ոգու մասունքները, դրա համար պարտական եմ մեր ժողովրդի մեծերից մեկի՝ Աբովյանի ժառանգությանը:

Համո ՍԱՀՅԱՆ

Հայաստան աշխարհում կան երկու սրբավայրեր՝ Օշականի Մեսրոպ Մաշտոցի նշխարները և Մեծ ռաբունապետ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի Քանաքեռը: Այս սուրբ երկրորդությունը և՛ խաչ է մեր ազգի համար՝ լուսավորչի պսակով և՛, մանավանդ, գոյատևման առհավատչյան...

Սերո ԽԱՆԶԱԴՅԱՆ

Նա գիտության իր ծարավով, իր համեստ ձգտումներով, սակավապետությամբ, ինչպես և իր մտքի հատկությամբ, իր սիրով և կամքի կայունությամբ վայելում էր մեր շնորհապարտությունն ու հարգանքը:

Ֆրիդրիխ ՊԱՐՐՈՏ

Մտքով մտնում ենք Քանաքեռ և խոնարհ գլուխ տալիս նրա այն հինավուրց քարերին, դարավոր հողին, որ ծնել է այդպիսի ազնիվ, անարատ, իմաստուն մարդ:

Վերա ԶՎՅԱԳԻՆՑԵՎԱ

Անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որը նման սիրով ու այնպիսի համբերությամբ, նվիրված լիներ մանուկների դաստիարակության գործին, ինչպիսին Աբովյանն է:

Կառլ ԿՈՒ

Աբովյանը եղավ մինը այն հայերին, որ ամենեն ավելի խանդով, հավատքով ու հանճարով երազեցին, ցանկացան ու պատրաստեցին ազատագրումը հայ մտքին, և իր գործը... հայկական պանթեոնին մեջ պիտի կանգնի հավիտենապես կենդանի ու հաղթական՝ իբրև մեծագույն հիշատակներեն մին՝ հայ հանճարին բարձրության ու հայ սրտին գեղեցկության :

Արշակ ՉՈՊԱՆՅԱՆ

Ռուսաստանի Դաշնությունում անչափ գովելի նախաձեռնություն է հղացվել՝ երևելի արվեստագետների, գրողների և նշանավոր մարդկանց անուններով վերանվանել գործող խոշոր օդանավակայանները: Եվ այսպես, Ղրիմ թերակղզու օդային խոշոր դարպասը՝ Սիմֆերոպոլի օդանավակայանը, Ղրիմի ժողովրդի քվեով անվանակոչվել է հայ-ռուս հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու անունով:

Ի դեպ, Մոսկվայի Վնուկովո և Դեմոդեդովա օդանավայականները այսուհետ կրելու են Ա. Պուշկինի և Մ. Լոմոնոսովի անունները:

ԼԱՏՎԻԱՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Նոյեմբերի 29-ին Լատվիայի լուսանկարչական թանգարանում բացվել է լատվիահայ լուսանկարիչ **Գեորգ Ավետիսյանի** «Ծնունդ» խորագրով ցուցահանդեսը: Այն ներկայացնում է տեսողական պատմություններ մարդու ծննդավայրի, կյանքի ընթացքի և հիշողությունների մասին: Ցուցահանդեսը տևելու է մինչեւ 2019 թվականի հունվարի 13-ը:

Գեորգ Ավետիսյանը ծնվել է Ռիգայում, հայ հոր և լատվիուհի մոր ընտանիքում: Ավարտել է Բրայթոնի համալսարանը լուսանկարչության մագիստրոսի աստիճանով: Յոթ տարի ապրել է Միացյալ Նահանգներում և Միացյալ Թագավորությունում, մասնակցել միջազգային տարբեր ցուցահանդեսների: Անցյալ տարի Ժամանակակից լուսանկարչական «Ֆոտոն» կենտրոնի «Տարբեր աշխարհներ 2017» մրցույթում Ավետիսյանն արժանացել է երկրորդ մրցանակին: Մրցույթում ներկայացված են եղել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ներկայիս ժամանակակից լուսանկարչության վերջին միտումները:

Ըստ «Լատվիական հանրային մեդիա» կայքէջի՝ Գեորգ Ավետիսյանը տեղեկացրել է, որ իր հաջորդ նախագիծը կապված է իր արմատների բացահայտմանը, որը նա իրականացրել է անցյալ գարուն Հայաստան կատարած իր առաջին այցի ժամանակ:

Ա. Բ.



Վախճանվել է Անդրեյ Բիտովը

Դեկտեմբերի 3-ին Մոսկվայի հիվանդանոցներից մեկում իր մահկանացուն կնքեց մեր ժամանակի ռուս խոշորագույն գրողներից մեկը՝ Անդրեյ Բիտովը: Կյանքից հեռացավ մեծատաղանդ գրողը, փայլուն էսսեիստը, ինքնատիպ սցենարիստը, վերլուծական ու թափանցող սուր մտքով օժտված խորունկ գրականագետը, ազատախոհ մարդը, առինքնող ու հմայիչ անձնավորությունը: Նա մեր ժողովրդի ու մեր գրականության իսկական բարեկամն էր ու նվիրյալը, մեր մշակույթի հրաշալի գիտակն ու ազնիվ ջատագովը:

1969 թվականին «Դրուժբա նարոդով» («Ժողովուրդների բարեկամություն») ամսագիրը (N 9) տպագրում է Բիտովի լավագույն գործերից մեկը՝ «Հայաստանի դասերը» ընդարձակ խոհագրական էսսեն: Այն արժանանում է ամսագրի տարվա լավագույն գործի մրցանակին: Այս գործը Հայաստանի և հայ ժողովրդի մասին երբևիցե գրված լավագույն երկերից մեկն էր:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 21.12.2018 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА